

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ԵՐԲ ԼՈՅՍԸ ԲԱՑՈՒԻ, ԽԱԻԱՐԸ ՑՐՈՒԵԼՈՒ Է»

Հարցազրույց Մեսրոպ Քահանայ Արամեանի հետ.

- Տէ՛ր Հայր, այսօր շատ է խօսուում աղանդների դէմ պայքարի մասին, միաժամանակ որոշակիացուած չէ «աղանդ» հասկացութիւնը: Փորձե՞նք յստակեցնել այն:

- Աղանդը պէտք է զանազանել հերետիկոսութիւնից: Հերետիկոսութիւնը ուսմունք է, որը շեղուած է ուղղափառ դաւանութիւնից, իսկ աղանդը հերետիկոսութեան վրայ հիմնուած շարժում է, որին յատուկ է որոշակի կազմակերպութիւն: Սա աղանդին բնորոշ առաջին կարեւոր յատկանիշն է, չնայած երբեմն աղանդները նոյնիսկ բիշ թէ շատ համակարգուած ուսմունք էլ չեն ունենում: Երկրորդ յատկանիշը աղանդաւորների վարձագծում որոշակի ծայրայեղութիւնների առկայութիւնն է, որոնց պատճառով նրանք յաճախ լուրջ վտանգ են ներկայացնում հասարակութեան համար: Եւ երրորդն այն է, որ աղանդների հիմքում ընկած ուսմունքները մարդահնար են, այլ ոչ թէ առաքելական յաջորդականութեամբ փոխանցուած մեր Տէր Յիսուս Քրիստոսից՝ Սուրբ Հոգու միջոցով:

- Հետեւաբար, կարող է լինել հերետիկոսութիւն, որն ընկած չլինի որեւէ աղանդի հիմքում:

- Այո՛: Օրինակ՝ ապողինարիզմը: Ապողինարի հետեւորդների մեծ մասը նրա մահից յետոյ վերադարձաւ Եկեղեցու գիրքը, եւ այդ հերետիկոսութեան վրայ հիմնուած շարժումը շարունակութիւն չունեցաւ:

- Դուք հերետիկոսութիւնը սահմանեցիք որպէս ուղղափառ դաւանութիւնից շեղում: Կարելի՞ է դրանից բխեցնել, որ աղանդաւորութիւնը որպէս այդպիսին ի յայտ է եկել բրիտանացիներից յետոյ. չէ՞ որ ուղղափառ դաւանութիւնը

վերջնականապէս յստակեցուեց մեր Տիրոջ գալուստով:

- Ըստ էութեան, աստուածային շնորհի գիտակցութիւնից դուրս ծնուած ցանկացած գաղափար աղանդաւորական բնոյթ ունի: Այդ առումով աղանդաւորութիւնը մարդկութեան չափ հին է, որովհետեւ դրախտում առաջին մեղսագործութիւնից անմիջապէս յետոյ մարդը խոտորուեց աստուածային Լոյսի եւ Ճշմարտութեան ճանապարհից եւ յայտնուեց աղանդաւորական գիտակցութեան մէջ: Ուստի մարդկութեան պատմութեան ընթացքում բազմաթիւ աղանդների ի յայտ գալն օրինաչափ հետեւանքն է այդ ճակատագրական խոտորումի: Աղանդներ կային նաեւ Յիսուս Քրիստոսի ժամանակ՝ փարիսեցիներն ու սադուկեցիները: Վերջիններս, օրինակ, մերժում էին յարութեան գաղափարը, որը կայ նաեւ Հին Կտակարանում: Մեր Տիրոջ գալուստից յետոյ ուղղափառ դաւանանքը ստացաւ աւելի ստույգ դաւանա-փիլիսոփայական ձեւակերպում եւ, ըստ այդմ, աւելի որոշակի դարձաւ աղանդի սահմանումը:

- Ի՞նչ է աղանդաւորի ամենաբնորոշ յատկանիշը:

- Հոգեբանական տեսանկիւնից աղանդաւորը մարդ է, ով յայտնուել է սեփական «ես»-ի խիստ զրգուած վիճակում, պարզ ասած՝ հպարտութեան մէջ: Պատճառն այն է, որ աղանդի մէջ յայտնուած մարդուն շատ հեշտ են ներկայացնում հոգեւոր կատարելութեան ճանապարհը, եւ նա ոգեւորւում է իր սրընթաց «անից»: Մարդը շատ կարճ ժամանակում կարող է «իւրացնել» տուեալ ուսմունքն ու դառնալ «հոգեւոր» ուսուցիչ, բարոգիչ, մի խօսքով՝ արագօրէն բարձրանալ աղանդի ներքին

աստիճանակարգով եւ հեղինակաւոր դիրք զբաղեցնել այդ կազմակերպութեան մէջ:

Քրիստոնէութիւնը սովորեցնում է ճիշտ հակառակը. կատարելութեան հասնելու համար մարդ պէտք է հրաժարուի իր «ես»ից, իր կամքից, ինչը նշանակում է կատարեալ խոնարհութիւն: Կատարեալ խոնարհութեան օրինակը տուել է ոչ այլ ոք, քան մեր Տէրն Ինքը, նրա մարդեղանալը դաւանաբանական տեսանկիւնից խոնարհում է անուանում: Քրիստոնէութիւնը խոնարհութեան նախապահ է:

- Աղանդաւորների մէջ կան ենթակայութեան յստակ յարաբերութիւններ, որոնք ամբողջատիրական աղանդների մէջ յաճախ ստրկութեան են հասնում: Արդեօ՞ք հակասութիւն չկայ Ձեր նշած հպարտութեան եւ իր նմանի հեղինակութիւնն անվերապահ ընդունելու, նրան ստրկանալու աստիճան հնազանդուելու մէջ:

- Ամենեւի՛ն: Հպարտ մարդը հոգեւոր կուրութեան մէջ է եւ այդ վիճակում շատ հեշտ է նրան մոլորեցնելը, հետեւաբար նաեւ՝ հոգեբանօրէն ճնշելը, ինչ-ինչ գաղափարներ ներշնչելը, եւ ի վերջոյ՝ ազդեցութեան տակ գցելը: Աղանդներում այդ նպատակով մշակուած յատուկ մեթոդներ կան: Աղանդապետներից շատերը իրենց հետեւորդներին կոյր հնազանդութեան մէջ պահելու համար ուսումնասիրում են մոգութիւն, կախարդութիւն, հմայութիւն: Կարող եմ բերել 20րդ դարի աղանդապետներից մէկի՝ «սայենթալոգիայի» աղանդի հիմնադիր Հարրի օրինակը. նա երկար տարիներ մարդկանց վրայ ազդելու դիւահնար հնարքներ է ուսանել յայտնի սատանայապաշտ, «Արեւելեան տաճարի» անդամ Ալիստէր Քրօուլիի մօտ:

Ընդհակառակը, խոնարհ մարդու

աչքերը բաց են, նրա հոգեւոր տեսողութիւնն աղնատուած չէ, եւ այդպիսի մարդուն հնարաւոր չէ մոլորեցնել:

- Մարդկանց մանիպուլացիայի (manipulation) ենթարկելու մեթոդները, որոնք կիրառոււմ են աղանդներում, նկատելի ընդհանրութիւն ունեն քաղաքական տեխնոլոգիաների հետ: Արդեօ՞ք այդ ընդհանրութիւնը պատահական է: Ձէ՞ք կարծում, որ աղանդները կարող են ինչ-ինչ ուժերի համար մարդկանց լայն զանգուածներին հնազանդեցնելու տեխնոլոգիաների մշակման «լաբորատորիա» լինել: Տեխնոլոգիաներ, որոնք, մի գուցէ, ապագայում կիրառուեն համաշխարհային տիրապետութիւն հաստատելու համար:

- Այդպիսի տեսակէտ կայ եւ, պէտք է ասեմ, այն ամենեւին էլ անհիմն չէ: Եթէ յետադարձ մի հայեացքով նայեմք մարդկութեան յատկապէս վերջին երկու-երեք հարիւր տարուայ պատմութեանը, ապա կարող ենք արձանագրել, որ այսպէս կոչուած լուսաւորութեան դարաշրջանից սկսած աշխարհում հետզհետէ տիրապետող է դառնում մարդապաշտական աշխարհայեացքը, որը ծնունդ առաւ քրիստոնէութիւնը մերժելու հենքի վրայ: 20րդ դարում այս գործընթացը յանգեցրեց անաստուծական կայսրութեան ստեղծման: Արեւմուտքում, որն այդ կայսրութեան մէջ չէր եւ նոյնիսկ նրա հակառակորդն էր, տեղի էր ունենում նոյն երեւոյթը, մի գուցէ փոքր-ինչ աւելի քողարկուած ձեւով (այսպէս կոչուած «սեկուլյարիզացիայի» (աշխարհիկայնացման)՝ հասարակութիւնից կրօնի անջատման երեւոյթը): Այսինքն, մարդկութիւնը կրօնից, ի մասնաւորի՝ քրիստոնէութիւնից հեռացնելով՝ հոդ նախապատրաստուեց նրան մոլորեցնելու համար: Ինչպէս արդէն նշեցի,

մոլորեցնելը (իմա՝ մարդու գիտակցութեան մէջ իրականութեան մասին կեղծ պատկերացում ձեւաւորելը) տիրապետելու նախապայմանն է: Սրա վրայ է հիմնուած գիտակցութեան մանիպուլացիան՝ որպէս տիրապետելու մեթոտ եւ մօտեցում:

Սակայն մարդն իր էութեամբ կրօնական էակ է, եւ կրօնական այդ պահանջումներն ինչ-որ կերպ պէտք է բաւարարուի: Խորհրդային Միութիւնում կրօնն արգելուած էր, բայց լայն տարածում էին ստացել սնոտիապաշտութիւնը, քախտագուշակութիւնը, «թուղթ ու գիրը» եւ այլն: Այսինքն, կրօնի բացը լրացուել էր երեւոյթներով, որոնք, ըստ էութեան, կուպաշտութեան եւ դիւապաշտութեան առանձին դրսեւորումներ են:

Նոյնը՝ Արեւմուտքում. «սեկուլյարիզացիայի» գործընթացն այնտեղ արդէն հոգեբանական եզմաժամ է յարուցել, եւ այսօր պարզորոշ նկատելի է աշխարհի բոլոր կրօնների խառնուրդից մի նոր համաշխարհային կրօն ստեղծելու միտում, որովհետեւ կայ դրա «հասարակական պահանջարկը»: Այդ նոր կրօնի ստեղծումը շատ նման է հերթական աղանդի ստեղծմանը՝ այն տարբերութեամբ, որ նպատակը միանգամից ամբողջ մարդկութեանը դա հրամցնելն է: Ուստի ամենեւին էլ անհիմն չէ պնդելը, որ համաշխարհային նոր կրօն ստեղծելու նախապահին օգտագործում է մարդկանց մոլորեցնելու՝ քաղմաթիւ աղանդների հարուստ «փորձը»: Բնականաբար, նոր կրօն ստեղծելու ջանքերը շատ վտանգաւոր են եւ կարող են մարդկութեանը հասցնել աղէտի:

- Դուք խօսեցիք մարդապաշտական (հումանիստական) աշխարհայեցողի՝ մարդկութեանը քրիստոնէութիւնից հեռացնելու եւ փոխարէնը աղանդաւորական գիտակցութիւն հաստատելու հար-

ցում խաղացած քաղաքական դերի մասին: Դեմոկրատական (ժողովրդավարական) արժեքամակարգը այդ մարդապաշտական աշխարհայեցողի բիրեղացման հետեւանքն է: Ձեր նախորդ ասածներից կարելի՞ է եզրակացնել, որ դեմոկրատական աղանդաւորութեան տարածմանը նպաստում է ոչ միայն «խղճի ազատութեան» կեղծ սկզբունքով, այլեւ՝ մարդու մէջ հպարտութիւն, կեանքում միայն իր ուժերին եւ ոչ թէ Աստուծուն ապաւինելու մղում, արքնացնելով:

- Անշուշտ: Մեր նախորդ գրոյցներում մենք արդէն խօսել ենք ինդիվիդուալիզմի (անհատապաշտութեան) փիլիսոփայութեան քաղաքական հետեւանքների մասին, որոնցից են նաեւ հպարտութիւնն ու Աստծուն հաւատալու վրայ չհիմնուած ինքնավստահութիւնը:

- Այս դէպքում ստացւում է, որ մենք անընդհատ աղանդների դէմ պայքարելուց ենք խօսում, բայց միեւնոյն ժամանակ կառուցում ենք այնպիսի հասարակութիւն, որը նպաստում է աղանդների եւ ընդհանրապէս աղանդաւորական գիտակցութեան տարածմանը: Ըստ Ձեզ, ինչպէ՞ս կարելի է այդ պայմաններում պայքարել աղանդաւորութեան դէմ:

- Նախ՝ եթէ աղանդաւորութեան վտանգի գիտակցութիւնը լինի, ապա դրա դէմ պայքարելուն ոչինչ չի վտանգի գիտակցութիւնը լինի, ապա դրա դէմ պայքարելուն ոչինչ չի խանգարում: Եւրոպական այնպիսի դեմոկրատական երկրներ, ինչպիսիք են Ֆրանսիան, Գերմանիան, շատ լուրջ պայքար են ծաւալում աղանդների դէմ, քանզի այդ երկրներում ազգային շահի եւ ազգային գոյարարական արժէքները պաշտպանելու կարեւորութեան յստակ գիտակցում կայ: Այլ կերպ ասած՝ այդ հարցում պետութիւնը ունի իր անելիքը:

Հարցազրոյցը վարեց՝
ՅԱԿՈԲ ՀԱՄՇԵՆՑԻՆ